| | | |
|---|---|---|
| Կարապետ ք. Տ. Գրիգորեանից | 1 | |
| Համբարձում ք. Ջրպետեանից | | 50 |
| Աբրահամ ք. Ղազարեանից · | 2 | |
| Մկրտիչ ք. Գահվաճեանից · | 1 | |
| Մովսէս Սամուէլեանից · | 1 | |
| Աղէքսանդր Ալլահվէրդեանից · | 5 | |
| Մելքոն Չիլինգարեանից · | 2 | |
| Յովակիմ Գեղամեանի ձեռամբ | 84 | 15 |
| Նիկողայոս Զիկանեանից · | 1 | |
| Յակոբ Ջօրանեանից · · | 1 | |
| Առաքել Մելքոնեանից · | 2 | |
| Մկրտիչ Ճարպկեանից · · | 2 | |
| Աղէքսանդր Սարայտարեանից · | 1 | |
| Դաւիթ Բուլբուլեանից · · | 1 | |
| Գրիգոր Տ. Միքայէլեանից · | 1 | |
| Տիգրան Ճարպկեանից · · | 1 | |
| Յակոբ Լանթարճեանից · | 1 | |
| Պօղոս Շարաբօղլեանից · | 1 | |
| Երիցուհի Թագուհի Համբարձումեանից · · · · | 10 | |
| Տ. Զմբուլատ Յարութիւնեանից | 1 | |
| Տ. Փերբրոնիա Վարդանեանից | 1 | |
| Ընդ ամենը | 418 | 75 |

Դ.) Նոյնպէս հետեւեալ անձերից նուէր ստացել է սոյն գրքերը · օր.

| | |
|---|---|
| Կարապետ ք. Տ. Գրիգորեանից · | 3 |
| Յովակիմ Գեղամեանից · · | 1 |
| Տիգրան Ճարպկեանից · · | 1 |
| Առաքել Տ. Յակոբեանից · · | 1 |
| Մկրտիչ Ճարպկեանից · · | 3 |
| Աղէքսանդր Սարայտարեանից · | 24 |
| Յովհաննէս Վանանդեանից · | 3 |
| Մկրտիչ Խաղաղորդեանից · · | 2 |
| Պերճ Պռօշեանից · · | 1 |
| Բժիշկ Աւետիք Բաբայեանից · | 1 |
| Մկրտիչ Տ. Մարգարեանից · | 1 |
| Ս. Պուլամիրեանից · · | 1 |
| Ընդ ամենը | 42 |

Դ.) Այլեւ նուիրաբար ստացել է Աբրահամ քահանայ Ղազարեանից «Արարատ» ամսագիրն 1877. 1878 թուերի.

| | | |
|---|---|---|
| Մասիս · · · · | 20 | |
| Մանկավարժական թերթ · · | 6 | |
| Հայկական Աշխարհ · · | 3 | |
| Փորձ · · · · | 20 | |
| Тифлисскій Вѣстникъ · · | 12 | |
| Голосъ · · · · | 34 | |
| Дѣло · · · · | 16 | |
| Всемірная Иллюстрація · · | 16 | |
| Огонекъ · · · | 5 | |
| Обзоръ · · · · | 5 | |
| Գ.) Ընթերցարանի համար թղթի, գրչի, պահարանի, վառելի փայտի, գրքեր կազմելու եւ այլն ծախք է եղել ընդ ամենը երկու տարվայ ընթացքում · · | 96 | 90 |
| Գումարն է | 345 | 42 |
| Մնում է առ ձեռն պատրաստի դրամ · · · | 47 | 93 |
| Եւ բացի սորանից ապառիկ կայ | 25 | 40 |
| Գումարն | 73 | 33 |

Ընթերցարանապետ Եղիայ [illegible] քահանայ
Համբարձումեան
Գանձապահ Կարապետ քահանայ Տէր
Գրիգորեան.

## ԱՐՄԱՒԻՐԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳԻՐ.

Այս երկրորդեան բեւեռաձեւ արձանագիրս, որ այս օրերս պատահելով Արմաւիր օրինակեցի Արմաւիրեան բլրի աշտարակի դրան ճակատի նեղ և երկայն քարի վերայից, որն գլորվելով ընկել էր բլրի ստորոտը, որ և բերելով Ս. Էջմիածին դրի 1870 թուին Արմաւիր գտնուած մեծ արձանաքարի մօտ, որ յարմարեցրած է ճեմարանի հարաւային հանդէպն, եթէ կարելի է տպագրելով Արարատ ամսագրիդ մէջ հրատարակել ի գիտութիւն հետաքրքիր գիտնականների, որոնց և հրաւիրել, երբ յաջողին կարդալ, թարգմանութիւնն հասցնեն խմբագրութեանդ ի հրատարակութիւն, նմանապէս և ցայսօր քանի տեղ Արարատեան նահանգի մէջ գըտ-

նուած և հետզհետէ Արարատ ամսագրի մէջ հրատարակուած այնպիսի արձանագրութիւնների թարգմանութիւններն. Մ. Ն. Ս.



## ԳԵՆՈՒԱՅԻ ՀԱՄԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԺԳ. ԵՒ ԺԴ. ԴԱՐԵՐՈՒՄ.

(Վիքտոր Լանգլուայի հետազօտութիւն, ֆրանսերէնից.)

Հազիւ երկու դար անցած էր այն տխուր նշաններից ի վեր, որոնք այնքան զանազան ձևերով ծանուցած էին արևմտքի քրիստոնեաներին աշխարհի մերձակայ վախճանը [1]) երբ, ահով ներշնչված աղօթքների փոխանակ, Սուրբ երկիրը անհաւատների ձեռից խլելու մի ջերմ փափաք յաջորդեց.

Երուսաղէմը ստրկութեան մէջ ընկնելուց յետոյ, իւր նախնի օրերի հարստահարութեան էր հանդիպած և նոր հարստահարիչների զզուելի լուծն էր կրում. Սրի տակ գերի դարձած և թշուառութեան ծոցից աղերսող Երուսաղէմը բարձր ձայնով ազատիչներ էր կանչում. Շուտով արևմտքի հեռաւոր երկիրներ ից եկած քրիստոնեայ զօրքերը հասան այս հրաւէրին և պղծված քաղաքի բլուրների ստորոտում երևեցան.

Ահա երևումէ Երուսաղէմը յանկարծ,
Ահա ցոյց են տալիս Երուսաղէմը նոքա միմեանց,
Ահա հազարաւոր ձայներ միացած,
Ողջունումեն Երուսաղէմը զգայմամբ [2]).

Նորանից քիչ ժամանակ յետոյ, բոլոր Ասորիքը նուաճված էր, և յաղթող Ֆրանկները տիրումէին այն երկիրների վերայ, որտեղ, հազար տարի առաջ, Քրիստոս մարդիկներին յայտնած էր իւր աստուածային գոյութիւնը.

Արևմտքից եկած պատերազմականներին հետևելով, Իտալիայի ծովային հասարակապետութիւնները խաչակիրների դրօշակին տակ Ասիայի մէջ իւրեանց փառասէր իշխանութիւնը տարածած էին. Ֆրանկների Ասորիքում

(1) J. de Varagine Chron. Januens. Ch. II. – Conrad Lycosthènes, de Prodig. pag. 226 et suiv.

(2) T. Tasso Gerusal. liv. III, oct. 3.